

ԱՍՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

- 1(395). Աբասուն չհավանողը,
Թող մանեթը մեչ տեղ տրնի:
- 2(396). Աբեշիկի ծիյու պես վազ-վազ ա
անըմ, վազ-վազ ա անըմ,
Խախալի կյուլսը պոն չի քցըմ:
(Այսինքն՝ անիմաստ դես ու
դեն է ընկնում և արդյունքի չի
հասնում):
- 3(397). Ալանի ա հերիք չի,
Խանձրահամն էլ տվուց վրեն:
- 4(398). Ախչիկը՝ տարեկան,
Պռժիքնը՝ օրեկան:
- 5(399). Ախչկանը վռթան չկա:
- 6(400). Ախպերն ընգա,
Ըխպըհարն ընգա,
Մարթն ընգա,
Վարթն ընգա:
- 7(401). Ախքառի էրեսը սև ա:
- 8(402). Ակռավը թուխա օրն ա լըղանըմ:
(Այսինքն՝ անպատեհ ժամի
արված գործ):
- 9(403). Ահի տարին ինչ ին,
Թե մահի տարին ինչ ըլեն:
(Ասված է անբարեհույս մարդ-
կանց մասին):
- 10(404). Աղջիկը էլոնց բաժին ա:
- 11(405). Ամեն ըռիո, որ ըռիո ըլի,
- Ոչխարի սուրուն սարերը վե
կունի:
- 12(406). Ամեն հաչոցին քար չեն քցի:
- 13(407). Ամեն մարթ պեծն իրա պլիթին ա
քաշըմ:
(Այսինքն՝ յուրաքանչյուրն իր
օգուտի մասին է հոգում):
- 14(408). Անախորժ ընտանիքը նման ա էն
ծառին, որ արմատը հոտած ա:
- 15(409). Անխելք բարեկամ չունենամ,
Խելոք թշնամի ունենամ:
(Այսինքն՝ անխելք բարեկամը
ավելի վնաս կբերի, քան
խելոք թշնամին):
- 16(410). Անհասկացողի դաքին ք...ծ,
Թե՛ քըմակին, մին ա՛:
- 17(411). Անշուն տեղ ա ընգել,
Անվիտ ման ա կյալի:
- 18(412). Անջրդի հողը մի աստված ունի,
Ջրովի հողը՝ երկու աստված:
- 19(413). Անտեր մնաս, կյանք,
Չմեռվա արևի նման աչքումը
դուրս եկար,
Ունքընը մեր մտար:

¹ Բանասաց Ե. Սիմոնյանը հետևյալ բացատրու-
թյունը տվեց. «Էտ Իրիցանց Ակովի խոսքն էր,
օղորմի իրան: Օղորմածիկ Լուսանն էլ ասըմ էր.
«Շատեն ծրուատակը հենչ ա ըրկըմ»: Իրիցանց
Ակովը մահացել է Չայրենական պատերազմից ա-
ռաջ (ծանոթ. բանահավաքի):

- 20(414). Անտերին՝ տեր, ճախարակ,
Որբերին՝ հեր, ճախարակ:
- 21(415). Աչկիտ միչին իլի մանեն:
- 22(416). Աջքոտ քեբցիդ,
Պանիտ տերը չես:
- 23(417). Աջալն էկել ա,
Մաջալ չի տալիս:
կամ՝
- 24(418). Աջալն էկել ա,
Մաջալ չկա:
(Այսինքն՝ մարդու վախճանը
եկել է և չի թողնում ինչ-որ
կարևոր գործ կատարել):
- 25(419). Առաչի արածը քամակը չիմանա:
- 26(420). Ասեղ ուտողը,
Մախաթ կք...ի:
(Այսինքն՝ փոքր բանը՝ փոքր
հանցանքը, մեծ է դառնում):
- 27(421). Ասեցի՛, հո չկալսեցի:
- 28(422). Ասված բառերը արծաթ են,
Չասվածը՝ ոսկի:
- 29(423). Աստծուն տղժար կլլձկան պանը
ասիլ չեն:
- 30(424). Աստոծ՝ իմ իրեսը, քու՝ ոտի
տակը:
- 31(425). Աստոծ հացը մնին ա տալի,
Իշտահը՝ մնին
- 32(426). Արին եմ լանց ըլըմ:
(Այսինքն՝ մարդը դժվարության
մեջ է):
- 33(427). Արջը որ մեծանըմ ա,
Քոթթները պլորների հետ խաղ
են անըմ:
- 34(428). Արջը քառասուն փանդ ունի,
Քառասունն էլ՝ տանձի վրա¹:
- 35(429). Արփիկը արև դառնա,
Մի քաշկինակ չի չորացնի:
(Ասում են չկամ մարդու մասին):
- 36(430). Բաղիրը գիդի, քե տավարը դվերը
ճուրը կտանի:
(Այսինքն՝ մարդը գիտի իր
գործն ինչպես բռնի):
- 37(431). Բախտը շան ոտերի տակին ա:
(Այսինքն՝ ամեն ինչ հեշտու-
թյամբ է տրվում):
- 38(432). Բամբակ կղնի, բուրդ կզգի:
- 39(433). Բերանն ընկավ՝
Գերանն ընկավ:
- 40(434). Բզի կըլխին պուռնցքով տալ չեն:
- 41(435). Բզով ծակած, կըղով կարած:
(Տրեխները որ կարում են, եզրե-
րը բզով ծակում են և տրեխի
կաշվից կտրած բարակ-երկար
կտորով, որը կոչվում է կուռ, կա-
րում են: Այլաբանությունը, այ-
սինքն չեբրևացող):
- 42(436). Բիզը ջլձլի միչին կենըմ չի:
(Այսինքն՝ ինչ-որ բան գաղտնի
պահել հնարավոր չէ. ի վերջո
հայտնի է դառնում):
- 43(437). Բոյովի խեկը ծընգներըմն ա:
- 44(438). Բրդե տկին՝ արեշումն դարա-
վաշ:
- 45(439). Գարնան ծաղիկին մի հույս տալ,

¹ Բանասացն այս առածը լսել է իր հորաքրոջ
ամուսնուց Արշակ Գրիգորի հաջատրյանից (ծա-
նոթ. բանասացի):

- Աշնան բերքին ուրախացի:
- 46(440).** Գերեզմանս մատով պետք աս փորես:
- 47(441).** Գծին տարան հըրսանիք, Ասեց՝ ըստի լավ աս, բանց՝ մեր տանը:
- 48(442).** Գիժը զըծին տեհավ ճակատը մի թիզ լենացավ: (Այսինքն՝ իր նմանին տեսավ և ուրախացավ):
- 49(443).** Գյունը տրաքեց, մեչը ընկավ: (Ասում են, երբ մի բան է կորչում):
- 50(444).** Գողությունը տղություն աս, Որ բռնվեց, շանտղություն աս:
- 51(445).** Դիփ մին աս, Դաստ ու պարակ մի գին աս:
- 52(446).** Դուզ խոսկը էշին կասեն:
- 53(447).** Եթե իգիթ տղա ունես, Կարողություն քեզ պետք չի: Եթե գիժ տղա ունես, էլի կարողություն պետք չի:
- 54(448).** Եկար դուշի պես, քյնացիր նուշի պես:
- 55(449).** Եղոտ պարկը շունը տարել աս:
- 56(450).** Եղունգի տակին էլ շունչ կա: (Այսինքն՝ թեկուզ նվազ, չնչին, բայց դեռևս հոյս կա)¹:
- 57(451).** Ես իմ դիպիլին տալ չդեմ, Թե ինչ աս քու եզը խրտնըմ աս²:
- 58(452).** Ես իմ դիպիլին տալ չդեմ, Թե քու ծին խըրտնըմ աս²:
- 59(453).** Ես մատաղ ինձ:
- 60(454).** Ետ-ետ արա, քու ըխպըհարիցը ուզի:
- 61(455).** Զուռնաչու կընգանը ասեցին.
- Պար կյալ գիդե՞ս:
Ասեց.- Բա էս պըռճըկվածը՞ որ-դե՞ղ աս սիպտակել:
- 62(456).** Էլը էլի միսը կերել աս, Ոսկուռը դեն չի քցել: (Այսինքն 1. Օտարը, որ օտարին ոչնչացնում է, գոնե ինչ-որ բան թողնում է, խնայում է: 2. Սխալ ուտելուց հետո նույնիսկ ոսկորը դեն չեն գցում):
- 63(457).** Էլի էն մարթն աս, Փալանն աս փոխվել: (Այսինքն՝ հագուստը փոխելով եւությունը չի փոխվում):
- 64(458).** Էլի ծին ցատողը շուտ վե կկյա:
- 65(459).** Էլն էլ լիացավ, Պելն էլ լիացավ, Սեզ պան չհասավ:
- 66(460).** Էլոնց ծեռովը, Սև օց փռնի:
- 67(461).** Էլոնց ծեռովը Օց աս փռնըմ:

¹ Բանասացն այս արտահայտությունն ասաց իր եղբոր բոսան անհուսալի առողջական վիճակի կապակցությամբ (ծանոթ. բանահավաքի):

² Պըռճըկվածը – մազերը: Այս բառը պըռճոկել բառից է, որ կնշանակի պոկոտել, լաց լինող, ողբացող կամայք սովորաբար իրենց ողբի հետ մաս պոկոտում կամ ձև են անում, որ պոկոտում, պոճոկում են մազերը: Այս բարբառում «պըռճըկված» ասում են մազերին, գործածվում է մաս արգահատական իմաստով: Դավանաբար սա շատ հնուց եկող երևույթ է կապված ողբասացության հետ (ծանոթ. բանահավաքի):

68(462). Էլոնց կլ...ը քաղցր ա:
(Այսինքն՝ աչք են տնկում ուրիշի
ունեցածի վրա):

69(463). Էլոնց կորածին ման եկողը շվշվա-
լով ման կգա:

70(464). Էլոնց հաջաթովը¹ հոր հոգուն
պատարագ ա անըմ:

71(465). Էլոնց մեռելը
Տըռիլով են թաղըմ:

72(466). Էշ չեն առել,
Նալ ե՞մ առնըմ:

73(467). Էշն էշի կողքին որ կապեն, գյա
խույը կսովորի, գյա՝ խաայաթը:

74(468). Էշը թավլի ա տվել,
Թոզը դիբել ա:
(Այսինքն՝ ինչ-որ բանի մեջ
չխառնվողըն էլ կարող է ակամա
հայտնվել թոհուրեռի մեջ: Կամ
էլ ինչ-որ մեկին փորձում են
բարեկամ համարվել):

75(469). Էշը խլիլ տված մղղսի:
(Այսինքն՝ պաշտոնագուրկ եղած):

76(470). Էշը տավարն արա:
(Այսինքն՝ անգետին գցիր գի-
տունների մեջ)

77(471). Էշը փալանով են կուլ տալի,
Ուխտը դոլանով:
(Այսինքն՝ կաշառք են վերցնում):

78(472). Էշին ասին.- Աչկըտ լիս, քեզ որք
քուռակ ա ըլել:
Ասեց.- Ինձ ինչ, իմ փալանն իմ
միչկին ա:

79(473). Էշն էլի են էշն ա,
Մեռակ փալանն ա փոխել:

80(474). Էս ինչ իմ մերն ա,
Շատ մարթ իմ հերն ա:

81(475). Էսորվա գործը էքուցվան չեն
քցիլ:
(Այսինքն՝ ամեն ինչ պետք է ժա-
մանակին կատարել):

82(476). Էտ քեզ՝ խըրատ,
Որ էլ չցանես կըտըվիատ:
(Այսինքն՝ ինչ-որ բանից զգու-
շանալ):

83(477). Էրազըմ սովածը հաց ա տենըմ,
Ծարավը՝ ճուր:

84(478). Էրեխի մի էրեսը լաց ըլնի,
Մեկը՝ ծիծաղ:

85(479). Էրկու պոնը պըռավի ա արել:
(Այսինքն՝ մի գործը երկու
անգամ էլ արվում: Ավելորդ
չարչարանք: Հավանաբար այս
արտահայտությունը կապված է
որևէ պատճառով հետ):

86(480). Էքուցվա պոնին
Չին եկած:

87(481). Ըրեխեն՝ մեջքիցըդ,
Հացը՝ հորիցըդ,
Ճիպտոն էլ՝ քոլիցըդ:

88(482). Ըրեխեն՝ միամա,
Մերը կշտանա:

89(483). Ըրեխեն մըլև լնց չըլի,
Մերը ծիծ չի տա:

90(484). Ըրեխեն՝ փորիցը,
Հացը՝ ֆորիցը:

91(485). Ըրեխին պոնի տի,

¹ Հաջաթ – ծածկախոսություն է, նշանակում է տղամարդու սեռական օրգան (ծանոթ. բանահավաքի):

Եղնեն քյնմ:

- 92(486). Ըրուգյունը մի պուտ ճըրով,
Ըռավուտը մի կուժ ճըրով¹:
- 93(487). Թամամ խոսըը էշին կասեն:
- 94(488). Թան էլ չէ, փըրթած մածուն:
- 95(489). Թանը չի լւովն է՛,
Թընձմձնն ա լւովը, որ ֆոտ չի
կյձլի:
- 96(490). Թանկ պահըմ են, էժան կորցընըմ:
(խոսըը կյանքի մասին է):
- 97(491). Թըքածը ետ չեն լիզիլ:
(Այսինքն՝ ասած խոսքից կամ
արած գործից չեն հրաժարվում):
- 98(492). Թողըմ ե՞մ, որ տղեն հորը քաշի:
(Այսինքն՝ չեն թողնում, որ մարդ
իր մտադրությունը իրագործի):
- 99(493). Թուրըը շատ սիրուն էր,
Կարմրուկ էլ հանեց:
- 100(494). Թուրքի հաց, հայի փոր:
- 101(495). Թևք ու փեշ արած մեջտեղ են
ընգել:
(Այսինքն՝ եռանդով գործի են
կաել):
- 102(496). Իլն իլացավ,
ճամփեն էրզընացավ:
- 103(497). Իմ աղությունը քյնձմ նոքարու-
թին սարքե՞մ:

- 104(498). Իմ հույսովը դոչը չխառնեք,
գառը չեմ գնալու:
(Այսինքն՝ դոչը որ ոչխարի հետ
խառնեն, ոչխարները կհիվա-
նան, և գառներ կծնվեն, և ծն-
ված գառներին չի պահի: Այ-
սինքն՝ ինչ-որ գործից նախա-
պես հրաժարվել):
- 105(499). Իմ սև սըրտին,
Քու կարմիր կլ...ին:
(Այսինքն՝ մի բան, որի անելն
անպատեհ է):
- 106(500). Իմ փորցած թանը
Ուրիշի անփորց մածնի հետ չեմ
փոխի:
- 107(501). Ի՞նչ ա, ուխտավորի էլ ա՞՞ գողըմ:
(Այսինքն՝ անտեղի է խոսում):
- 108(502). Ի՞նչ ա, ուխտավորի էլ ե՞մ քընում:
- 109(503). Ինչ չի տեսել պատին,
Տեսել ա ճակատին:
- 110(504). Ինչքան շատ մարդ եմ ճանա-
չում,
Էնքան իմ շանը ավելի եմ սի-
րում:
(Այսինքն՝ շունը ավելի հավա-
տարիմ է, քան մարդիկ):
- 111(505). Իշի անըմն ա բեղնամ:
(Էշին արգահատանքով են վե-
րաբերվում, մինչդեռ աշխարհի
բեռը տանում է):
- 112(506). Իշի փալանը մնաց:
(Այսինքն՝ կարևոր գործը, առաջ-
նահերթը մնաց, չարվեց):

113(507). Իշի քացուն էլը կղիմանա,
Չիու քացուն ձին:

114(508). Իշին ասեցին.- Աչկըտ լիս, քեզ
թու ա ծնվել:

¹ Այսինքն՝ գործը ժամանակին անելու դեպքում քիչ ենթադրա է ծախսվում: Խոսքը տան ամա-
նեղենի մասին է, որը պետք է օգտագործելուց հե-
տո անմիջապես լվանալ, որ հետո շատ ցուր
չծախավի: Առոյա կենցաղային խնդիրը վերահի-
մատավորվել է:

Ասեց.- Ինձ ինչ, տրբանից իմ միչկի պեղը պակսըմ չի:

Այսինքն լվի ոտքը սոթ կտա և կճղատվի, այնքան կոկ է):

115(509). Իրա հոր ք...ին չի ք...ըմ:
(Այսինքն ինչ-որ մեկը դուրս է գալիս իր կարողությունների սահմանից):

123(517). Խախի մեռելը տռիլով են թաղում:
(Այսինքն՝ ուրիշի գործ անելիս ջանք չեն թափում):

116(510). Իրա մեղքը՝ իրա շլինքը:
(Այսինքն պատասխանատվությունն ընկնում է կատարողի վրա):

124(518). Խակոռիկը խանձ անըմ,
Դոմփիկը² ջանը³:
(Այսինքն վատը՝ ընդհանուր ամանը, լավը՝ բերանը):

117(511). Իրեսը՝ հալ,
Տակը՝ տհալ:
(Յուրը որ հալում են, յուրը կանգնում է ամանի երեսին, քափը՝ մտավածքը, իջնում է տակը: Այսինքն վատը քողարկված է, արտաքուստ լավ է, երեսը հարթ է, իսկ տակը եղածը պիտանի չէ):

125(519). Խաչը պուճուր աս,
Չամա գորոթյունը մեծ աս:

126(520). Խաչը տերն աս գորավոր անըմ:

118(512). Լալի լեզուն լավը կհասկանա:

127(521). Խափեցին,
Տաշտը ոռիցը կապեցին:
(Չացի տաշտը լիքը հաց է եղել, լիքը տաշտը ցույց են տվել, հետո հացը դատարկել և դատարկ տաշտը տվել հաց ուզողին: Առածի իմաստը հետևյալն է՝ ինչ-որ բան ցույց տալ, բայց չտալ, թողնել դատարկածեմ):

119(513). Լձավ պար եկողը,
Ոռ-ոռ էլ պար կկյծ:
(Այսինքն՝ վարպետն իր վարպետությունը բոլոր պարագաներում կդրսևորի):

128(522). Խելոք կյառը օխտը մեր աս ծծում:

120(514). Լափուն տվել աս,
Լահուն առել:
(Այսինքն ջուրը վարարել է, հունից դուրս եկել):

129(523). Խելոքի հետ թընդսպաս ուտեմ,
Անխելքի հետ փլավ չուտեմ:

121(515). Լռությունը համփերություն աս:

130(524). Խոսքը մի փուփ մեղրով ուտվի չի:

122(516). Լուճ վրեն ճղատվըմ աս:
(Որ մեկը շատ լավն է լինում, գեղեցիկ, մաքուր հագնված, այդ դեպքում են ասում: Չիացմունքի արտահայտություն է¹:

131(525). Խոփը սուր աս,
Չամա հանըը փայանովի աս:

¹ Բացատրությունները բանասաց Բ. Խեմչյանին են (ծանոթ. բանահավաքի):

² Տարբերակում այս բառը «դոմփիկ» է (ծանոթ. բանահավաքի):

³ Բանասաց Չայկ Խեմչյանն այս առածն այսպես է մեկնաբանել. «Ընչաքաղցություն, անձնական շահամոլություն է արտահայտում: Խակը՝ ոչ հասունացածը ընդհանուրի հաշվին է դնում (խանը, չափի է ենթարկում, իսկ հասունացածը դոմփիկը, ինքը կլանում):»

- 132(526). Խուփը թուլ ա ըլել,
Պղինձը քըթել:
- 133(527). Ծախու ծեռը աջու ծեռից մոհ-
տաջ չըլի:
(Այսինքն՝ որևէ բանից կախում
չունենալ):
- 134(528). Ծառեն ծըռատակ՝ հեշտ ա
ըրկըմ:
- 135(529). Ծարավ եմ, կյորտը դե՞մ կուլ
տալ:
- 136(530). Ծարավ եմ, ճուր չկա խմեմ,
Կյորտն եմ կուլ տալի՞:
- 137(531). Ծենը տաք տեղից ա տյուս
կյալի:
(Ասվում է այն դեպքում, երբ
ապահովված մարդը որևէ խնդ-
րի մասին թեթևորեն է արտա-
հայտվում):
- 138(532). Ծեր փորըմը հըրսանիք ա,
Իմըմը ըսկի կնունք էլ չկա:
- 139(533). Ծին ու ճորին կըվեցին,
Ոտի տակ էլը քյննց:
- 140(534). Ծիտն ինչ ա,
Որ իրա խաշն ինչ ըլի:
- 141(535). Ծովին թրով տալիս եր:
(Այսինքն բանի պետք չէ):
- 142(536). Ծուկը կըլիսիցն ա ֆոտել:
- 143(537). Կաթնով պրինձ,
Չերթն եկավ ինձ:
- 144(538). Կալի տակի եզը կալիցը կուտի:
- 145(539). Կալիցն ի՞նչ մխթարվեցի,
Որ կալատակիցն ի՞նչ մխթար-
վեմ:
- 146(540). Կամն առավ, չըլերն ընգա՞վ:
- 147(541). Կամն առնել, քարերն ընկնել:
Կամ՝
- 148(542). Կամն առավ,
Քարերն ընգա՞վ:
(Այսինքն գործը դժվարացնել,
անհնարին դարձնել):
- 149(543). Կաշառքը մութ տեղը լիս ա տա-
լի:
- 150(544). Կատվի պոչը որ քաշես,
Չանչը շիանց կտա:
- 151(545). Կատվին ասեցին՝ կըճիրըտ տեղ ա,
Խոր թաղեց:
- 152(546). Կատուն էլ փոխինձ կուտի՞:
- 153(547). Կատուն ալըլիթ տարել ա¹:
- 154(548). Կարըմ ես՝ պեծը պըլթիդ քաշի:
- 155(549). Կելը կըլիսին տըռել ա:
(Այսինքն ինչ-որ մեկը խռովել է,
մեղացել է):
- 156(550). Կեղ չկա, որ շուս չըլի:
- 157(551). Կեղացու մոզին որ կյորանըմ են,
Չըրևանը իրա մոզին պինդ ա
կապըմ:
- 158(552). Կենջակը՞ ցաքին քցել:

¹ Մի մայր հացը թխել է և երեխային տվել է պըլիթը՝ փոքրիկ կլոր հաց, որը թխում են փոքր երեխաների համար: Երեխան խռովել է, որ իրեն փոքր հաց են տվել և այն մի կողմ է դրել: Կատուն այն թոցրել է ու կերել, և երեխան գրկվել է իր բաժնից: Այս առածի իմաստը հետևյալն է ունենցած քչից էլ գրկվել:

² Կենջակ – լծի ծայրն է, որ դնում են եզան ուսին: Ասվածի իմաստը բառացի հետևյալն է եզը լուծը տանում զցում է մացառների մեջ, իսկ այլաբան-

- (Այսինքն՝ պատասխանատվությունն իրենից հեռացնել):
- 159(553). Կետը ոռի տակովը քյնըմ ա:
(Այսինքն՝ չափից դուրս հարուստ է):
- 160(554). Կերակրի համը չտեսանք, բայց ծխիցը քոռացանք:
- 161(555). Կընգած հո մարթը մեռած,
Չո հարևանի էլը սատկած:
- 162(556). Կընիկը տեքրակընգածնն ամեն վատություն կցանկանա, բացի քոսից:
- 163(557). Կծիկ արա,
Ետի պանին մտիկ արա:
- 164(558). Կյուղն իրան գյուրն գիղա,
Բոզն իրա:
- 165(559). Կյուղը կյն, վա՛յ մնի տիրոջը,
Կելը կյն, վա՛յ մնի տիրոջը:
- 166(560). - Կռիկ, ինչի կշորորա:
- Քիբար եմ:
- Կռիկ ինչի՞՞ քայ կուտես:
- Անճար եմ¹:
- 167(561). Կռվըմը փլավ չեն փայ անըմ:
- 168(562). Կուժը ճըրի ճամփին կկոտրի:
- 169(563). Կուկուն՝ ածած, ճուճուն տարած:
(Կկուն ձու է ածում, ուրիշի բնում, և դուրս եկած ճուճուն ուրիշի բածին է դառնում: Այլաբանորեն նշանակում է եղած բանը տանուկ տալ: Այսինքն
- եղած բանը տանում են, կորցնելու իմաստով):
- 170(564). Չան ուզում եմ գառները կենդանի լինեն,
Չան ուզում եմ գայլերը կուշտ լինեն:
- 171(565). Չայացա կնունք չտեսա,
Թուրքացա սուլունթ չտեսա:
(Այսինքն՝ նախատեսվածը չի ստանում):
- 172(566). Չայացանք մեռոն չտեսանք,
Թուրքացանք, սուլունթ չտեսանք:
- 173(567). Չայը² որ մեծանըմ ա,
Խոզն ա քյնըմ:
- 174(568). Չայի հաց, թուրքի փոր:
(Այսինքն՝ թուրքը հացին գոռ ա անըմ):
- 175(569). Չաշիվը մին ա,
Քաչալ Չասան, Չասան՝ քաչալ:
(Այսինքն՝ ինչ-որ բանի կամ ինչ-որ հարցի, որ կողմից էլ մոտենաս, պատկերը նույնն է):
- 176(570). Չարգելի հարևանը ավելի ծեր-քատու ա,
Քանց՝ հեռու բարեկամը:
- 177(571). Չարսանիք չկա, որ լաց չլինի,
Մեռելատուն չկա, որ ծիծաղ չըլնի:
- 178(572). Չարսը ուզըմ ա կեսոր նման տռի,
Չամա վախըմ ա ոռը ճղփի:

րեն նշանակում է պատասխանատվությունն իրենից հեռացնել (ծանր. բանասացի):

¹ Բանասացն այս առածը լսել է թժվուհի Լվարդ Թովմայանից, որն իր հերթին լսել է իր վանեցի ծնողներից (ծանր. բանասացի):

² Չայ – ծերունի (ծանր. բանահավաքի):

179(573). Հարուստի աղջիկը առնելը դժար
ա,
Պահիլը՝ հեշտ:

180(574). Հարուստի խոփը սուր կըլի,
Ախքասի՝ կ...ը:

181(575). Հարու տվողի քամակն ա անց
կենըմ,
Քացի տվողի՝ աղաքը:
(Այսինքն մարդը երկերեսանի է):

182(576). Հացակերի հետ ք... կեր,
Ք...կերի հետ մեղր մի ուտի:

183(577). Հացը՝ տալոնով,
Ախչիկը շալոնով¹:
(Այսինքն՝ հացը՝ քիչ, աղջիկը՝
շատ):

184(578). Հենց եզը իրանն ա շինել,
Անունն էլ Ղախսան ա դրել:

185(579). Հեռվից գանգի ծենը լնավը կըլի:

186(580). Հերն ընգա՝ հորն ընգա,
Ախպերն ընգա՝ ըխալըհարն ըն-
գա,
Քիրն ընգա՝ Քուռն ընգա,
Մարթն ընգա՝ բախտն ընգա,
Փեսեն ընգա՝ փոսն ընգա:

187(581). Հըրևանի հարսը սիրուն կըլի:

188(582). Հիվանդությունը սարը, քոլը տա-
նըմ չի,
Մարթությունն ա տանըմ:

189(583). Հմբարտին տանը բակեցին,
Տըռանը բոյինը չկալավ:

190(584). Հո-հո՝ կա՝ տուն կըլաիրի,
Հո-հո՝ կա՝ տուս կըլաիրի:

191(585). Հու անտուի շուած,
Հու անյեղ բրինձ կերած²:

192(586). Չին ու ջորին կրվի արին,
Արանքընը էլի ոտը կոտրեց:

193(587). Չմեռն՝ արևին, ամառը՝ ստվերին:

194(588). Չուկ ուտելու ցանկություն ունե-
ցողի ոռը կթռչվի:

195(589). Չուկը կերար՝ ջուր խմեցիր, վայ
քու գլխին,
Չուկը կերար՝ արաղ խմեցիր,
վայ ձկն գլխին:

196(590). Ղարայազ³ կել քիչ կար,
Մինն էլ գյամով անց կացրին:
(Այսինքն՝ իբր անպետք մարդը
պակաս էր, մեկն էլ ավելացավ):

197(591). Ղոնաղի կյալն ու ըրելի ծնվելը
գիղվալ չի:
(Այսինքն՝ կան բաներ, որ ան-
կանխատեսելի են):

198(592). Ծամփես՝ մոլոր,
Սիրտս՝ ճոլոր:
(Այսինքն՝ վատ վիճակից սիրտը
նեղվում է):

199(593). Ծիպոտըտ քոլիցըտ կտրի:

200(594). Ծուկ-ճուկ ք...ըմ են,
Մի տեղ՝ ուտըմ:

201(595). Ծուսըը քարի կլլուխն ա ըլել:

202(596). Ծուտը ծըվըմն ա մաշուր:

¹ Շալոն - էշելոն, պատերազմի ժամանակ մարդ-
կանց էշելոնով ուղղաճակատի գծից տեղափո-
խում էին քիկունը (ծանոթ. բանասացի):

² Այս ասացվածքը բանասաց Հայկ խեմշյանը լսել
է բանասաց Մարտին Կարախչ Սիմոնյանյից (ծա-
նոթ. բանահավաքի):

³ Ղարայազ - անտառոտ տեղավայր Քոի հովտում
(ծանոթ. բանահավաքի):

203(597). Ման եկող հավը միշտ ծուկն կկորցնի:

204(598). Ման էկողի գյա փորին կըլի, գյա՛ ոռին:
(Այսինքն՝ դրսում շրջողին կամ կկերակրեն, կամ հետույքին կխսին, կքեն):

205(599). Մանը մանի ա, ճաղացը պանի ա:
(Այսինքն՝ գործը հաջող է ընթանում):

206(600). Մանը մանի ա, քյարվանը պանի ա:

207(601). Մարդ աչքիցը քու ըլի, ավելի օգուտ ա, Քան խելքիցը քու ըլի:

208(602). Մարդու հոգեառ հրեշտակն էլ մեծ ըլի:

209(603). Մարթ կա էփած հավին հարկ չի համարըմ,
Թուրացի հետևիցն ա վազըմ,
Հավիցն էլ ա ընգըմ, թուրաչիցն էլ:

210(604). Մարթ պետք ա իրան շլապկեն վեր ունի կյոջըմը տընի,
Հետը մըսըլհաթ անի:
(Այսինքն՝ եթե հարմար մեկը չկա, որի հետ խորհրդակցես, գլխարկիդ հետ խորհուրդ արա: Այլաբանորեն՝ ինքդ ըեզ հետ):

211(605). Մարթը մարթի կուշտ ա քյընըմ, էշն՝ իշի:

212(606). Մարթի թակ՝ վարթի թակ:

213(607). Մեծը պիւճուրին ուտըմ ա¹

214(608). Մեծի արածը քըքած ա, Կերածը՝ կորած:

215(609). Մեկը սովից իրան կ... էր կործմ,
Մինն էլ էկավ, թե՛
Մի խան կորեկ տուր:

216(610). Մեկին տալոնով ա,
Մեկին՝ շալոնով (էշելոն):

217(611). Մեղըը քամողը մատը կլիզի:

218(612). Մեչը փուչ, օխտը հատիկ:
(Այսինքն՝ ոչինչ չկա):

219(613). Մեր ճաղացն էս ա,
Ալիը թեփին կես ա,
Ուզես՝ էս ա,
Չուզես՝ էս ա:

220(614). Մըսկըմը որ տեղ ըլի,
Պուկըմն էլ յեղ կըլի:

221(615). Մի էծ իծի հմար լւով ա,
Քան թե հազար կյլուխ ոչխարը:

222(616). Մի կովի, օխտը ծովի:

223(617). Մի շապիկ միսը հազար այիթ ծածկըմ ա:

224(618). Մի վարար որ չըլի,
Մի ծըմծըման² կըլի:

225(619). Մի քիչ կար,
Մի քիչ էլ աստված տվուց:

¹ Հավանաբար սա «կուշտը սովածին մանը է բրդում» առածի տարբերակն է (ծանոթ. բանասացի):

² Ծըմծըման - կաթիլ-կաթիլ: Իջևանում և Դիտավան գյուղում ծըմծըման ասվում է կաթիլ-կաթիլ հոսող, բարակ ջրին: Դիտավան գյուղից վեր՝ անտառում կա մի տեղ, որը կոչվում է Ծըմծըման: Այդտեղ դիք քարածայտեր են, որոնց բարձունքից մի բարավիկ ջուր է հոսում ժայռերն ի վար, այսինքն ծըմծըմում է, որի համար տեղավայրը կոչվում է Ծըմծըման (ծանոթ. բանասիակաքի):

- 226(620). Մին քչերհանա շուտ վեր կա-
ցողն ա շահըմ,
Մին էլ՝ շուտ հըրսանիք ըլողը:
- 227(621). Մինն ա՛ ըռիե՛ ա,
էրկու ա՛ ըռիե՛ ա:
(Այսինքն՝ չարչարանքը չարչա-
րանք է):
- 228(622). Մինչևը չկլա՛ նորը,
Չինի դադրը իմացող չի ըլիլ
- 229(623). Մկան ցեքը ճղացին շահաղ ա:
- 230(624). Մկանը քերինջ չտվող:
(Այսինքն՝ ժլատ):
- 231(625). Մոխրի մեջ աճած,
Վարդ աճած:
- 232(626). Մորը տես, ախչիկը առ:
- 233(627). Յեղ ու մեղրը շան տըկըմը:
- 234(628). Նագին գիդի իրան սագին:
(Այսինքն՝ իր գործը իմանալ,
ինքնասածի լինել):
- 235(629). Նանը կալովը մին պիրըմ ա,
Խալովը մին՝ վեր ունըմ:
- 236(630). Նեղ օրից եղը լեն օր էլ կա:
- 237(631). Նըստի, ոռն էրվի,
Կաղնի, ոտն էրվի:
- 238(632). Նրա՛ ճկատին կյրած ա:
- 239(633). Շահից թարխանություն ա եկել:
- 240(634). Շան անունը տուր,
Փետը ձեռտ վե կալ:
- 241(635). Շան հաչիլն էլ արհեստ ա:
- 242(636). Շանը քանի փետին անես, էն-
քան կհաչա:
(Այսինքն՝ որևէ մեկին կամ
որևէ բանի ինչքան ուշադրու-
թյուն դարձնես, այնքան վի-
ճակը կվատթարանա):
- 243(637). Շանը շնչին հեռվից տեհավ,
ճակատը մի մատ լենացավ:
(Այսինքն՝ նմանը նմանին հան-
դիպեց):
- 244(638). Շատ աշխատողին՝ ալ շաբիք,
Քիչ աշխատողին՝ չալ շաբիք:
- 245(639). Շընըթուլը մեչն ընգավ,
Ուզողի բանն ուղվատն ընգավ:
- 246(640). Շընըթուլը մեչներն ա ընգել:
(Այսինքն՝ շան նման գզվտ-
վում են):
- 247(641). Շիլը ի՞նչ ա,
Թե քոռն ինչ ըլի:
- 248(642). Շորն սսել ա՛ ինձ պահի բոխ-
չըմը,
Ես քեզ կպահեմ մարթամիչըմը:
- 249(643). Շունը կաղալով սատկիլ չի:
- 250(644). Շունը հաչալով կսատկի:
(Այսինքն՝ վատ մարդը միայն
վատ բան անելով կմտնի, ան-
ուղղելի է):
- 251(645). Շունը շան ոտը կոխիլ չի:
(Այսինքն՝ նմանը նմանին չի նե-
ղացնի):
- 252(646). Շունը տերը ճմանչըմ չի:
(Այսինքն՝ խառը իրադրություն
է):
- 253(647). Շունն էլ պըռավի ոչ:

- 254(648). Ոչ հանգզմն ես, ո՛չ՝ տանգզմը:
(Այսինքն ո՛չ կեսունմն ես, ո՛չ վերջունը):
- 255(649). Ոչ շատից շատ ուրախացի, որ ունես,
Ոչ քչից շատ տխրի, որ չունես:
- 256(650). Ոռը շալվարներըմը տեղվարվըմ չի:
(Այսինքն՝ մեծամիտ եմ: Դուրս պրծածներ, որոնք իրենց ունեցածից զարմացել են և դրանից էլ մեծամտացել):
- 257(651). Ոռըմը էրկաթի սամի կկոտրի:
- 258(652). Ոռից ոռ ա տըրել,
Փորից՝ փոր:
(Այսինքն ինչ-որ մեկը ուռճացել է, այնքան է կերել, որ սարսափելի չաղացել է):
- 259(653). Ոռիցը ոռ կհանեն,
Փորիցը՝ տկճոր:
(Այսինքն՝ շատ կաշխատեցնեն):
- 260(654). Ով ինչ փըրթի,
Են էլ կուտի:
- 261(655). Ով որ մեծին չլսի
Ոտը քարի կդիպչի:
- 262(656). Ով՝ չուշտ, նա՝ կուշտ:
- 263(657). Ով տըռըմ ա, բամբակ ա,
Մենք տըռըմ ենք, զանգակ ա:
- 264(658). Ոտը կարպետը գյուրծ մեզնի:
(Այսինքն՝ չափը ճանաչի):
- 265(659). Ոտի տակին պեծ ա էրըմ:
(Այսինքն՝ շտապում է):
- 266(660). Որ ապրանքը տիրոջը չքաշի,
կասեն կյուղանովի ա:
- 267(661). Որ ծեզ մի վարար կետ ըլի,
Մեզ էլ մի ծըմծըման կըլի:
(Այսինքն՝ եթե մեկին հարստություն է տրվում, ապա մեկին էլ գոյատևելու մի փոքրիկ հնարավորություն է տրվում):
- 268(662). Որ մարթս սրտովս չի,
Տեքորս անըմն էլ գիղըմ չեն:
- 269(663). Որդեղ՝ արև,
Ընդեղ չուխետ փռի:
- 270(664). Որտեղ՝ մարդ, էտտեղ՝ մահ:
- 271(665). Որտեղով որ ճուր ա քյնացել,
Էլի ընդեղով ճուր կքյնա:
- 272(666). Որց իշին քուռակ չի ըլի:
- 273(667). Չըփլախը տկլորի ծոցն ա մտնըմ:
(Այսինքն՝ նմանը նմանին է ապավինում):
- 274(668). Պեծիքը՝ մաշ,
Դարսը՝ դումաշ:
- 275(669). Պեմը քըշերհանա (քշերով)¹ վե կենալը չի,
Պեմը գործի հաջողությունն ա:
- 276(670). Պառավ ա, բայց հարիր քահել կտանի ծովը, հետ կպիրի²:
- 277(671). Պառավ ձին գարի չի՞ ուտում:
- 278(672). Պառավի արածը գթած ա,
Կերածը՝ կորած:

¹ Քշերով - Իջևանցիների մոտ՝ առավուտ վաղ (ծանոթ. բանահավաքի):

² Պե հու ծովի ճուրը խմիլ չղեն (ծանոթ. բանասացի):

- 279(673). Պատը ծեփն արժի:
(Այլաբանորեն նշանակում է՝
յուրաքանչյուրին ըստ արժան-
վույն):
- 280(674). Պարկը ջրվալիցը մեծացել ա:
- 281(675). Պեծը ոտի տակին ա:
(Այսինքն՝ արագաշարժ և գոր-
ծը չհետաձգող անձ է):
- 282(676). Պեծը ոտիս տակին՝ քյնճմ ու
կյճմ:
(Այսինքն շատ շտապ, արագ
ինչ-որ տեղ գնալ՝ ինչ-որ բան
անելու համար):
- 283(677). Պեծն իրան պլթին ա քաշըմ:
- 284(678). Պըռավի չվանին լվացք չի փըռ-
վիլ:
(Այսինքն՝ անվստահելի մարդ
է):
- 285(679). Պիճն իրան կնուքն ուզըմ ա:
(Այսինքն՝ ապօրինի գավակն էլ
կնուքն (մկտություն) է պա-
հանջում):
- 286(680). Պլորնիտ հենց ուռջրել ես,
Կասես գյամիտ բաթմիշ ա ըլել:
- 287(681). Ջուլը¹ փորի տակն ա ընգել:
- 288(682). Ջուխտ ձիատեր բաթին դառար:
- (Այսինքն՝ ոչինչ չի ունեցել և
միանգամից ունեցվածքի տեր է
դարձել):
- 289(683). Սարը, քուլը չի տանի,
Մարդկությունը կտանի:
- 290(684). Սարի եզը տաշտըմն էլ ա հնձըմ,
սարըմն էլ:
- 291(685). Սարի Սառքաթըրը չեմ,
Տաշտի՝ Մառքաթըրը:
- 292(686). Սովածը հաց ա տենըմ,
Ծարավը՝ մուր:
(Այսինքն՝ երազ է տեսնում):
- 293(687). Ստի ոտները կարճ ա:
- 294(688). Սրտըմը որ տեղ ըլի,
Պուկըմն էլ յեղ կըլի:
- 295(689). Սրա չվանին խոտ չի դրվի:
- 296(690). Սև եզը վեր ա ընգնըմ,
Տանակավորը շատանըմ ա:
- 297(691). Սև խոզը անտառըմ կզտնի իրա
կերը:
- 298(692). Սևը սիրեկան ա, ամենքին տիրե-
կան ա:
Սիպտակը թան ա, սև շան պան ա:
- 299(693). Վախեցի են ճըրից,
Որ ո՛չ խըշըմ ա, ո՛չ թըշըմ:
- 300(694). Վիրի կապիտը² նրա տուրը կտա:
- 301(695). Վնասի կիսից ետ տառնուն էլ
պան ա:
- 302(696). Տանից տուս էկողի յա՝ փորին
կըլի, յա՝ ոռին:

¹ Ջուլ – Սա էշի կամ ձիու թամբի տակից անա-
տունի մեջքին զգվող կտորն է, որ ձիու կամ էշի
մեջքը թամբը չհարի ու վերքեր առաջացնի: Եթե
գրաստի տերը աղքատ էր և ի վիճակի չէր թամբ
առնել, ապա բավարարվում էր ջուլով: Երբ էշը
նիհար էր լինում կամ բեռը շատ էին բարձում, ու
թամբը թեքվում էր, թամբի տակ ջուլը սահում և
ընկնում էր փորի տակ: Այստեղից էլ առաջացել է
այլաբանությունը: Երբեմն աղքատները չէին կա-
րող թամբ ձեռք բերել և էշին միայն ջուլում էին
(ծանոթ. բանահավաքի):

² Կապիտ – կապույտ, ժողովուրդն այս բառն ըն-
կալում է որպես վիրի կապիտ - երկինք, աստված,
արարիչ (ծանոթ. բանահավաքի):

303(697). Տանողի հետ ուտըմ ա,
Տիրոջ հետ՝ «Վա՛ր՝ Վարթան»
կանչըմ:
(Ասվում է երկերեսանի մարդ-
կանց մասին):

304(698). Տաշած քարը տափին չի մնալ:

305(699). Տաշտն ու մաղը պատիցը կախ
ա ըլել:
(Այսինքն՝ աղքատանալ, հնա-
րավորություններից զրկվել):

306(700). Տճռճվ փեշին ք...ած խանըմ:

307(701). Տատը ճանիրը մանեց,
Իլիկիցը մի ոստ հանեց:
(Այսինքն՝ մի բան անել և ար-
դյունք ստանալ):

308(702). Տարին տարուն շնակ ա տալի:
(Այսինքն՝ գնալով վիճակը
վատթարանում է, և նախորդ
տարուն երանի են տալիս):

309(703). Տճրտակ փետին շուն չի հաչի:
(Այսինքն՝ ոչ-ոք առանց վերա-
բերմունք ստանալու ոչինչ չի
անի):

310(704). Տեղը տեղին,
Կանաչեղենը՝ յեղին:
(Այսինքն՝ եթե ամեն ինչ տեղին
է արվում, արդյունքը լավ է
լինում):

311(705). Տեղին խոսքը տեղին կասեն:

312(706). Տեղը տաք տեղից ա տյուս եկել:

313(707). Տերը շանը պոնի տրուց,
Շունը՝ իրա պոչին

314(708). Տըժար օրվա ումբը կարճ ա
[ըլըմ]:

315(709). Տըռան ոռին թորա չկա:
(Այսինքն՝ մեկը որ մի վատ բա-
նի սովոր է, իր վատ բնույթից
կամ գործողությունից չի իրա-
ժարվում):

316(710). Տըռան ոռին՝ կյճրի հացը մա-
հանա:

317(711). Տիրովին տերն ա տարել,
Անտերին կելն ա տարել:

318(712). Տոպրակը ջվալից մեծացել ա:

319(713). Տվել են՝ դուռը յաշի,
Թե չէ կարպետը գլուխը քաշի:

320(714). Տրճ ցեթի վրովը անց կենողը
աթեշնակ¹ կընգնի:

321(715). Ցանի, որ հնճեմ:

322(716). Ցորեն հաց չունես,
Ցորեն լեզու ունեցի:

323(717). Ուզողն ուզողից ի՞նչ կուզի:
- Պըռավի պ... կուզի:
(Այսինքն՝ մուրացկանը մուրաց-
կանից ոչինչ չի կարող ստա-
նալ):

324(718). Ուժեղ մարդը նմանվում ա առյու-
ծի,
Որ պռավում ա, են էլ ա քացի
տալի²:

325(719). Ուղտին նստել ես,
Կուզեկուզ ման ես գալիս:

326(720). Ունիս՝ դուն իս,

¹ Աթեշնակ – վեներական հիվանդություն (ծանոթ. բանասացի):

² Սատկող անասունը ոտքերը թափահարում է, որը քացի տալու տպավորություն է թողնում: Այս առա-
ծի միտքն այն է, որ հզորն էլ ի վերջո մահկանացու
է և մահից առաջ ոտքերը ձգում է:

- Չունիս՝ շուն իս¹:
(Ասվում է փող ունեցողի մասին):
- 327(721). Ունքերըտ հենց վրա ես տվել,
Կասես թե գյամիտ բաթմիշ ա
ըլել²:
- 328(722). Ուրիշի ձին ցատողը շուտ ա
իջնըմ:
- 329(723). Ուրիշի՝ մենակ կնիկն են լավ
ք...ըմ:
- 330(724). Փորցանքը, որ պըտահիլու ա
ըլըմ,
Տերը³ քյումակ ա անըմ:
(Այստեղ խոսքը նախախնամու-
թյան մասին է):
- 331(725). Փալանը⁴ փորի տակն ա ընգել:
- 332(726). Փեսի՝ շվաք, փըշի՝ շվաք:
- 333(727). Փորցված թանը լւով ա,
Քանց՝ անփորց յուղը:
- 334(728). Քաշալը ճար ունենա,
Իրան կըլխին կանի:
- 335(729). Քառին ք...ես լւով ա,
Քանց թե պոն հասկացնես:
- 336(730). Քարը հենց քցիլ չի,
Որ ճղոպուրը կենդ վեր ընգնի:
- 337(731). Քարը, որ մի տեղ շարունակ կե-
նա, երեսը կըլընանչի:
- 338(732). Քացի տվողի առաչն ա անց
կենըմ,
Հարու տվողի՝ քամակը:
- 339(733). Ք...ակերի հետ՝ ք...ակեր,
Հացակերի հետ՝ հացակեր
- 340(734). Ք...ը ծընդի տակ պահվիլ չի:
- 341(735). Ք...ը քանի ժամ տաս,
Ֆոտը վեր կըլի:
(Այսինքն՝ ինչ-որ բան պետք չէ
փորփորել):
- 342(736). Ք...ըմը ուռած տանմ:
- 343(737). Ք...իլով քյնացին,
Հըվաքիլով ետ եկան:
(Այսինքն՝ իրենց ցանկացածին
չհասան և իրենց արած աշ-
խարհակությունը իրենց բաժին
հասավ):
- 344(738). Քեզ որ մի վարար ըլի,
Սեզ էլ մի ծըմծըման կըլի:
- 345(739). Քինթը երեսմեն դեվեր չի գա:
(Այսինքն՝ մարդու վատը ծած-
կել չի լինի):
- 346(740). Քոռանա են աչքը, որ առաջ իրան
չի տենըմ:
- 347(741). Քոռին ճըրաքլիս չըկա:
- 348(742). Քոստո էծը ըխարի ակնիցն ա
ճուր խնըմ:
(Այսինքն՝ անարժանը ձգտում է
լավագույնին տիրանալ):
- 349(743). Քու տերն էլ կասի՝ նախորդը էշ
ունեմ:

¹ Բանասացն այս առածը լսել է իր տատից՝ Եսթեր
Խենչյանից (ծանոթ. բանասացի):

² Գյամիտ բաթմիշ ա ըլել – նավի խորտակվել է:

³ Տեր ասելով հասկանում են այն անձը, որի հետ
փորձանքը կատարվում է (ծանոթ. բանահավաքի):

⁴ Փալան-թամբ: Վերոհիշյալ ասացվածքը բառացի
նշանակում է էջը նիհարել է, վրայի թամբը արդեն
չի համապատասխանում էշի մեջքի չափերին և
բեռի ծանրության տակ թեքվում ընկնում է փորի
տակ (տես նաև թիվ 288(682) ասացվածքի բացա-
տրությունը) (ծանոթ. բանահավաքի):

- 350(744). Օխտը չափի, Մըհետ կտրի: (Եւան անէլ, դրոշմել: Ասվում է այն դեպքում, երբ աղջկան նշանում են):
- 351(745). Օչեն նուժնը, Կոտրած կուժը: (Այսինքն հրաժարվել որևէ անիմաստ ու անօգուտ բանից):
- 352(746). Օրեն՝ զարթ, Տարեն՝ մըխկիտ: 5(757). Ակին-կրակին անել¹: (Գործը արագացնել, շտապ անել):
- 353(747). Օրը՝ քննցած, Խաթեն՝ մնացած: 6(758). Ամեն մարթ դիմացինին իրա արշի-նով ա չափըմ: (Յուրաքանչյուրը դիմացինի մեջ տեսնում է այն, ինչ ինքը ունի, կամ ինքը ցանկանում է):
- 354(748). Օրն օրին հետ յոլա կքյնն (Այսինքն օրերն անցնում են միանման): 7(759). Անկզակը քցել: (Հարմարեցնել):
- 355(749). Օցը տքցնողին ա կծըմ: 8(760). Անծիլ- անծիլ ըլիլ: (Ծվեն-ծվեն լինել):
- 356(750). Օցի կյլլիլը որ ցավըմ ա, ճամփեն ա տուս կյռլի: 9(761). Աչքը ուտել (Աճկըս ուտըմ չի): (Համարձակությունը չի բավականացնում):
- 357(751). Օցի վրն քքի, օցը կսատկի: 10(762). Աչքներովն ընգնել: (Վերաբերմունք ցույց տալ):
- 358(752). Օցի քիստը լռգլռգը կմարսի: (Այսինքն դժվարությունը մասնագետը կհաղթահարի): 11(763). Աստծու էրեսից ընգած: (Աստծուց մերժված, վատ, արգահատելի անձնավորություն):

ՂԱՐՁՎԱԾՆԵՐ

- 1(753). Ադույուլ մի անի: (Գլխատաղ չանել, անուշադրության չմատնել):
- 2(754). Աժուռի կյռլ: (Գլխի ընկնել, ջոկել):
- 3(755). Ականջը կանչի: (Այսպես են ասում, երբ ցանկանում են, որ հեռվում գտնվող ինչ-որ մեկը հասու դառնա, տեղյակ լինի տան անցուդարձին):
- 4(756). Ականջը կտրել: 12(764). Աստծու փեշը փռնել: (Հույսն աստծու վրա դնել):
- 13(765). Աստծուն տըժժը կյլռկան պռն ասել: (Այնպիսի միտք արտահայտել, որ նույնիսկ աստված չի ընդունի, արգելված միտք, խոսք):
- 14(766). Աստղի հետ խաղ ա անըմ: (Գեղեցիկ է):

¹ Բառացի նշանակում է օջախի, ակի (ակն) կրակը բորբոքել, որ օջախի վրայի ուտելիքը արագ եփվի (ծանոթ. բանահավաքի):